

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՀՊՏ-ՆԵՐԸ

Արամ Ադապյան
2006

ՄԱԿ-ի 'Կենսաբազմազանության մասին' կոնվենցիայի հիմնադրույթներում (հոդ. 9) որպես ռազմավարական առաջնահերթ ուղղություն առանձնացվել է կենսաբազմազանության պահպանությունը բնական պայմաններում (in situ), որն իր լիարժեք արտացոլումն է ստանում բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ): ԲՀՊՏ-ները համազգային արժեք ներկայացնող օբյեկտներ են, որոնք կոչված են պահպանելու եզակի և տիպիկ բնական համալիրները և օբյեկտները, դրանց զենոֆոնը:

Հայաստանում բնական ռեսուրսների օգտագործումը ակտիվորեն ազդում է կենսոլորտում ընթացող բնական պրոցեսների վրա, որը բարձրացնում է ԲՀՊՏ-րի համակարգի նշանակությունը կենսաբազմազանության պահպանության համար բնական պայմաններում:

Կենսաբազմազանության տեսակետից Կովկասը ընդգրկված է աշխարհի 200 կարևոր գլոբալ էկոռեզիոնների թվում: Միևնույն ժամանակ այն ճանաչվել է Conservation International որպես մեր երկրագնդի 25 կարևորագույն կիզակետերից՝ 'տաք գոտիներից' /Hotspots/ կենսաբանական նշանակության և կենսաբազմազանությանը սպառնացող ծանրաբեռնվածության աստիճանի տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի (1999 թ.), ինչպես նաև Հայաստանի ԲՀՊՏ-ների զարգացման պետական ռազմավարության և գործողությունների ազգային ծրագրի (2003 թ.) հիմնադրույթներում, որպես հիմնական նպատակ նախատեսված է ապահովել մարդու կայուն զարգացման համար անհրաժեշտ Հայաստանի լանդշաֆտային և կենսաբանական բազմազանության պահպանումը, ռացիոնալ օգտագործումը և վերականգնումը: Այս ծրագրերի մշակումը երկրի բնապահպանական քաղաքականության արդի խնդիրներից է, որն ուղղված է 'Կենսաբազմազանության մասին' Կոնվենցիայի դրույթների իրականացմանը, հանրապետության լանդշաֆտների և կենսաբանական բազմազանության պահպանության հետագա բարելավմանը, բնապահպանական և բնօգտագործման աշխատանքների ներդաշնակ զուգորդմանը, այդ բնագավառում միասնական կոորդինացված քաղաքականություն վարելուն և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելուն:

Հայաստանի ԲՀՊՏ-րի ներկա վիճակը

Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգը ձևավորվել է 1958 թ.-ից: Ներկայումս Հայաստանում գործում են 3 արգելոցներ, 2 ազգային պարկ, 23 արգելավայրեր, որոնց ընդհանուր մակերեսը կազմում է մոտ 311 հազ. հա, որը Հանրապետության տարածքի մոտ 10%-ն է, իսկ առանց Սևանա լճի մակերեսի այն կազմում է հանրապետության տարածքի մոտ 6%-ը: Այստեղ պահպանվում են հանրապետական ֆլորայի և ֆաունայի տեսակային կազմի մոտ 60%-ը: ԲՀՊՏ-ները, բացառությամբ 'Սևան' ազգային պարկի, հիմնականում անտառային լանդշաֆտներ են:

1995 թ.-ից բոլոր պետարգելոցները և ազգային պարկերը ընդգրկվել են ՀՀ բնապահպանության նախարարության կազմի մեջ:

ՀՀ Կառավարության 2002թ. որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ստեղծվել է կենսառեսուրսների կառավարման գործակալությունը, որի ենթակայությանն են հանձնվել Մևան՝ և Դիլիջան՝ ազգային պարկերը, երեք՝ Խոսրովի անտառ, Էրեբունի, Շիկահող՝ պետարգելոցները, Որդան կարմիր, Մև լիճ՝ և Սոսու պուրակ՝ արգելավայրը:

ՀՀ Կառավարության որոշմամբ 2004թ. Հայաստան՝ ՊՈԱԿ-ը ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությունից հանվել և տրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը:

Հանրապետության 23 արգելավայրերից ներկայումս միայն երեքն են գտնվում ՀՀ բնապահպանության նախարարության կազմում և ունեն ՀՀ կառավարության կողմից հաստատված արգելավայրերի կանոնադրությունները: 19-ը ընդգրկված են ՀՀ Գյուղնախարարության նախարարության Հայաստան՝ ՊՓԲԸ կառուցվածքում և ըստ էության տարբեր անտառտնտեսություններում գործում են որպես սովորական անտառպետություններ: Մեկ արգելավայրն էլ գտնվում է ՀՀ արդյունաբերության նախարարության Ֆիզիկայի ինստիտուտի կազմում:

Երկրի ոչ մեծ տարածքը /29,74 հազ.կմ2./ և խիտ բնակեցումը /ավելի քան 100մարդ/կմ2/, արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման բարձր աստիճանը բերել են լանդշաֆտների արմատական ձևափոխությունների: Բնակավայրերի խիտ ցանցի առկայությունը դժվարացրել է համեմատաբար խոշոր և կոմպակտ տարածքների առանձնացումը որպես ԲՀՊՏ-ներ: Դրա հետևանքով ԲՀՊՏ-ների մեծ մասի սահմանները կտրտված են, ԲՀՊՏ-ների առանձին հատվածների միջև տեղակայված են բնակավայրեր իրենց հողերով, ճանապարհներ, կան նաև չպահպանվող անկլավային տեղամասեր, որոնք հաճախ խոչնդոտում են խոշոր կաթնասունների տեղաշարժերին: ԲՀՊՏ-ների կազմավորման ժամանակ հաճախ հաշվի չեն առնվել էկոհամակարգերի և լանդշաֆտների ամբողջականությունը, սահմանները քարտեզագրվել են հիմնականում անտառի եզրերով, որոնց վերին և ներքին սահմանները ներկայումս խիստ փոփոխվել և ճշգրտման կարիք ունեն:

Այսպես, Խոս-րո-վի անտառ՝ և Շիկահող՝ պետարգելոցների սահմանների ճշգրտման և քարտեզագրման վերջին աշխատանքները կարարվել են 1986 թ.-ին: Հետագայում կատարվել են բազմաթիվ փոփոխություններ հողահատկացման բնագավառում, փոփոխվել է բնական էկոհամակարգերի վիճակը և նրա տարրերի՝ բուսական ու կենդանական աշխարհի ներկայացուցիչների տարածվածությունը (արեալները): Ընդլայնվել են հարակից համայնքների կառուցապատված և գյուղատնտեսական նշանակության հողերի տարածքները: Դա խոչընդոտում է արգելոցի և հարակից բնակավայրերի փոխհամաձայնեցված աշխատանքները: Հանրապետությունում սկսվել և շարունակվում է համայնքների ժամանակավոր սխեմաների քարտեզագրման և հաստատման գործընթացը: Այս իրավիճակում խիստ կարևորվում է ԲՀՊՏ-րի սահմանների ճշգրտումը և վերանայումը, որի աշխատանքները սկսվել են 2004թ.-ից /Շիկահող և Խոսրովի անտառ պետարգելոցների, Մևան՝ և Դիլիջան՝ ազգային պարկերի սահմանների ճշգրտման, վերանայման և քարտեզագրման աշխատանքները, ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ արգելավայրերի սահմանների ճշգրտման, վերանայման և քարտեզագրման աշխատանքները/:

Հայաստանի տնտեսության մեջ 90-ական թվականների սկզբից հաստատվեց բազմակացութաձևություն, կատարվեց հողերի սեփականաշնորհում, արդյունաբերության և տնտեսության մյուս ճյուղերի ապապետականացում:

Հանրապետության ներկայիս տնտեսական քաղաքականությունը իր ազդեցությունն է թողել նաև բնապահպանության քաղաքականության ոլորտում, որը որոշ չափով ուղղված է համապատասխան կառուցվածքների ինքնաֆինանսավորմանն անցնելու: Բնապահպանության բնագավառում նման մոտեցումները ընդունելի չեն ԲՀՊՏ-ների որոշ կատեգորիաների (արգելոցներ) համար:

ԲՀՊՏ-րի համակարգում ընդգրկված չեն որոշ էկոհամակարգեր, մինչդեռ Հայաստանի լանդշաֆտային բնույթը և էկոհամակարգերի բազմազանությունը պահանջում են ԲՀՊՏ-ների ցանցի ընդլայնում՝ ընդգրկելով մյուս էկոհամակարգերը ևս: Առ այսօր ճշգրտված չեն արգելոցների և արգելավայրերի գիտականորեն հիմնավորված սահմանները, մշակված չեն կառավարման պլանները, ինչպես նաև հստակեցված չեն նրանց պահպանության և օգտագործման ռեժիմները:

Հանրապետության ԲՀՊՏ-ներն իրենց ֆունկցիաները կատարում են ոչ լիարժեքորեն, քանի որ ցանցի ստեղծման ժամանակ հաշվի չեն առնվել լեռնային երկրների բնորոշ էկոլոգիական-աշխարհագրական չափանիշները՝ լանդշաֆտների և նրանց բաղադրամասերի բարձրունքագոտիական բաշխվածության աշխարհագրական օրինաչափությունները, տարածքի սահմանագատման գետ-ավազանային սկզբունքները և այլն: Այս ամենը լրջորեն դժվարացնում է ԲՀՊՏ-ների ռեժիմի ապահովումը:

Թերի է ԲՀՊՏ-ների կառավարման իրավական դաշտը, այն կարիք ունի ուղղվելու, լրամշակվելու և համապատասխանեցվելու միջազգային չափանիշներին: Չկան նրանց գործունեությունը կարգավորող նորմատիվային փաստաթղթեր: Մեր հանրապետությունում հատուկ նշանակություն է ստանում նաև ապագա ԲՀՊՏ-ների համար տարածքների հատկացման խնդիրը:

ԲՀՊՏ-ներում գործնականում բացակայում են գիտական հետազոտությունները իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան և բարձր որակավորում ունեցող մասնագետները:

Արգելավայրերին տրված է Հայաստանի բնական համալիրների և նրանց՝ հատկապես արժեքավոր բաղադրամասերի պահպանության, բուսականության աշխարհի գենոֆոնդի բարելավման և վերարտադրության, ինչպես նաև տարածքի տնտեսական և բնակչոլոգիական հարաբերությունների հավասարակշռությունն ապահովելու ֆունկցիաներ:

Առ այսօր ճշգրտված չեն ԲՀՊՏ-ների գիտականորեն հիմնավորված սահմանները, ինչպես նաև չեն հստակեցված արգելավայրերի պահպանության և օգտագործման ռեժիմները և գործունեությունները: Որպես արդյունք, արգելավայրերը ներկայումս շահագործվում են որպես սովորական գյուղատնտեսական հանդակներ կամ անտառային ֆոնդ:

Եթե նույնիսկ հաշվի առնենք բոլոր արգելավայրերը, հանրապետության էկոլոգիական ցանցը չի համապատասխանում էտալոնային բավարարության սկզբունքին, քանզի չի ներառում տիպիկ էկոհամակարգերի մի մասը, որը կապահովեր կենսաբանական և լանդշաֆտային բազմազանության պահպանումը հանրապետությունում:

ԲՀՊՏ-ի համակարգի զարգացման մոտեցումները/հայեցակարգային ուղղությունները

Ներկայումս հողերի յուրացման և սեփականաշնորհման տեմպերի աճի հետ մեկտեղ խիստ արդիական է դարձել ԲՀՊՏ-ների կատարելագործված համակարգի ստեղծման հարցը և նրա ներդաշնակ ինտեգրացումը երկրի սոցիալ-տնտեսական

զարգացման ռազմավարությանը: Այս ոլորտում 90-ական թվականներից համալիր գիտական հետազոտություններ գրեթե չեն իրականացվել, որը պայմանավորված էր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Կենդանական և բուսական աշխարհի տեսակային կազմի, թվաքանակի, տարածվածության և էկոլոգիայի մի շարք հարցերի վերաբերյալ գիտական հիմնավորված տվյալների ստացումը հնարավորություն կընձեռի գնահատել ԲՀՊՏ-ների օպտիմալ սահմանները, կազմակերպել էկոհամակարգերի և դրանց տարրերի արդյունավետ պահպանությունը: Հաշվի առնելով այդ հետազոտությունների պարբերականության անհրաժեշտությունը նախատեսվում են մի շարք ուսումնասիրություններ և մոնիտորինգի համակարգի ներդրում ԲՀՊՏ-ում:

Առանձնահատուկ նշանակություն ունի ԲՀՊՏ-ներում հազվագյուտ, արժեքավոր և անհետացման եզրին կանգնած բույսերի և կենդանիների տեսակների պահպանությունը և վերարտադրությունը:

ԲՀՊՏ-ների համակարգի կառավարման և կատարելագործման, բնական ժառանգության պահպանման գործում դրանց դերի բարձրացման, միջազգային ստանդարտներին համապատասխանող հանրապետության էկոլոգիական ցանցի ստեղծման գործընթացը ապահովելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել ԲՀՊՏ-ների արդի վիճակի գնահատում, համակարգի որպես հանրապետության բնության չափանմուշի վերլուծություն, ֆլորայի և ֆաունայի բնորոշ տարրերի գույքագրում (հաշվառում) և մոնիտորինգ:

Նշենք նաև, որ բնական ապրելավայրերի յուրացման պայմաններում պահպանման պասիվ ձևերը ի վիճակի չեն ապահովելու կենսաբազմազանությունը, հատկապես երբ խոսքը վերաբերում է խոշոր կաթնասունների (Բեզոարյան այծ, Հայկական մուֆլոն, առաջավորասիական հովազ) պահպանությանը, որոնց կենսագործունեության համար բավականին մեծ տարածքներ են անհրաժեշտ: Հետևաբար, կենդանական աշխարհի ռեսուրսների պահպանման և վերականգնման մեթոդները պետք է լինեն արմատական և առավել արդյունավետ, ընդհուպ միջև տեսակների բուծում՝ հետազայում վերաբնակեցման (ռեինտրոդուկցիա) նպատակով:

Հայաստանի էկոհամակարգերի բազմազանության պահպանության համար անհրաժեշտ է ընդլայնել ԲՀՊՏ-ների ցանցը: Ոլորտի հեռանկարային զարգացումը անհնար է առանց ֆլորայի և ֆաունայի ներկայացուցիչների տեսակային կազմի և կենսաէկոլոգիական առանձնահատկությունների հետազոտման: Նշենք նաև, որ բնական ապրելավայրերի յուրացման պայմաններում պահպանման պասիվ ձևերը ի վիճակի չեն ապահովելու կենսաբազմազանությունը: Հետևաբար, կենսաբազմազանության ներկայացուցիչների պահպանման և վերականգնման մեթոդները պետք է լինեն արմատական և առավել արդյունավետ: Ելնելով վերոգրյալից՝ ներկայումս, խնդիր է դրվում ուսումնասիրել Հայաստանի ֆլորայի և ֆաունայի հազվագյուտ և արժեքավոր տեսակների կազմը, տարածվածությունը և կենսաէկոլոգիական առանձնահատկությունները ԲՀՊՏ-ներում, գնահատել նրանց ներկա վիճակը, ընդգրկման աստիճանը՝ պահպանման միջոցառումների, այդ թվում բազմացման և ռեինտրոդուկցիայի (վերաբնակեցման) մեթոդների մշակման նպատակով: Տեսակային կազմի և թվաքանակի փոփոխությունների հետագա համեմատական բազմամյա վերլուծության համար անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել գույքագրման և մոնիտորինգային աշխատանքներ:

Անհրաժեշտ է բացահայտել Հայաստանի ֆլորայի և ֆաունայի ներկայացուցիչների ընդգրկման աստիճանը ԲՀՊՏ-ներում: Պետարգելոցներում իրականացվող պահպանության աշխատանքների արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ են ժամանակակից, սոցիալ-տնտեսական պայմաններին համահունչ և ճշգրտված քարտեզներ:

Հայաստանի Հանրապետության կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագիրը մշակվել է 1999թ.-ին՝ Կենսաբազմազանության մասին կոնվենցիայից բխող ՀՀ պարտավորություններին համաձայն:

Ռազմավարական ուղղությունները ուղղակի արտացոլումն են Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի հոդվածների և նկարագրում են երկրի առաջննթացը կոնվենցիայի պահանջների իրականացման գործում:

Մասնակցային գործընթացի շնորհիվ ընդգրկելով ոլորտի հիմնախնդիրները տիրապետող տասնյակ մասնագետների, որոշվել են 13 հետևյալ ռազմավարական առաջնահերթությունները.

In-situ պահպանություն

Ex-situ պահպանություն

Կենսաբանական և լանդշաֆտային ռեսուրսների կայուն օգտագործում

Ինստիտուցիոնալ ներուժի և վերապատրաստման զարգացում

Էկոլոգիական կրթություն և հասարակության մասնակցություն

Իդենտիֆիկացիա և մոնիտորինգ

Հետազոտություն

Կեղեկատվության մատչելիություն և փոխանակում

Համագործակցություն(տեխնիկական, գիտական, միջպետական և տեխնոլոգիայի փոխանակման)

Ազդեցության գնահատում

Օրենսդրություն

Խթանող միջոցառումներ

Ֆինանսական ռեսուրսներ

Յուրաքանչյուր ընտրված առաջնահերթության ուղղությամբ գործողությունների ծրագրով նախատեսվել են մի շարք միջոցառումներ, որոնց իրագործումը պլանավորված էր հինգ տարվա կտրվածքով: Ներկայումս նշված գործողությունների ծրագրից իրականացվել են որոշ միջոցառումներ, որոնցից առավել կարևորների վերաբերյալ կտրվի կարճ տեղեկատվություն:

In-situ պահպանություն. Նշված առաջնայնությունը պարունակում է մի քանի ենթաուղղություն, որոնք հիմնականում ուղղված են բնության հատուկ պահպանվող տարածքների համակարգի կատարելագործմանը, նոր ԲՀՊՏ-ների ստեղծմանը և ԲՀՊՏ-ներից դուրս լանդշաֆտների և էկոհամակարգերի պահպանմանը և վերականգնմանը:

UNDP/GEF ARM/97/G/31 Հայաստանի կենսաբազմազանության համար հզորությունների գնահատում՝ ծրագրի շրջանակներում մշակվել է և ՀՀ կառավարության կողմից 2002թ.-ին հավանության է արժանացել Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն ու գործողությունների ազգային ծրագիրը: Այն նախատեսում է մի շարք գործողություններ ԲՀՊՏ-ների ոլորտում օրենսդրության կատարելագործման,

ԲՀՊՏ-ների կառավարման բարելավման, համակարգի հզորությունների ուժեղացման և նոր ԲՀՊՏ-ների ստեղծման ուղղությամբ:

Բոլոր նկարագրված գործողությունները Կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրի միջոցառումների շարքում են և դրանց լիարժեք իրականացման համար անհրաժեշտ է մշակել տարածքների կառավարման պլաններ, ճշտել սահմանները, գոտիավորել տարածքները և ստեղծել ադմինիստրատիվ կառույցներ: Այդ բոլորը պահանջում է ֆինանսական խոշոր միջոցներ:

Կենսաբազմազանության ռազմավարության և գործողությունների ծրագրում հատուկ տեղ է տրված էկոլոգիական միջանցքների և էկոլոգիական ցանցի ստեղծմանը: Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին՝ նոր օրենքի նախագծով սահմանված է էկոլոգիական միջանցքի գաղափարը: Հաշվի առնելով որ, էկոլոգիական ցանցերը հանդիսանում են Կենսաբազմազանության մասին՝ կոնվենցիայի և Լանդշաֆտների ու կենսաբանական բազմազանության համա-Եվրոպական ռազմավարության գլխավոր ուղղություններից մեկը, Հայաստանը մեծ կարիք ունի իրականացնել իրազեկության ծրագրեր տարբեր մակարդակներում՝ դրանով իսկ նախապայմաններ ստեղծելով էկոլոգիական ցանցերի հետագա զարգացման համար:

Հատուկ պահպանվող տարածքներից դուրս կենսաբազմազանության պահպանությունը առավել կարևոր է իրականացնել արոտավայրերում և խոտհարքներում, հաշվի առնելով, որ այդ լանդշաֆտները ներկայումս գտնվում են դեգրադացման ծանր աստիճանում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, Ազգային հզորությունների ինքնազնահատում կայուն էկոլոգիական կառավարման համար՝ ծրագրի ներդրումային փաթեթում ընդգրկված է Հայաստանի արոտավայրերի բարելավմանը նպատակաուղղված ծրագրի նախագիծ:

Բնական պաշարների կառավարում և չքավորության նվազեցում՝ ծրագրի շրջանակներում:

1.Սևան՝ և Դիլիջան՝ ԱՊ-րի համար պահպանվող տարածքների կառավարման պլանավորում և կենսաբազմազանության մոնիտորինգ ենթաբաղադրիչի շրջանակներում իրականացվել են ազգային պարկերի կենսաբազմազանության, այդ թվում հազվագյուտ և անհետացող տեսակների, հաշվառում, գույքագրում և քարտեզագրում: Ուսումնասիրվել է ջրային և ցամաքային էկոհամակարգերի վրա անտրոպոգեն ծանրաբեռնվածությունը, գնահատվել են կենսառեսուրսների պաշարները:

2.Մշակվել և ազգային սեմինարում քննարկվել է Սևան՝ և Դիլիջան՝ ազգային պարկերում կենսաբազմազանության մոնիտորինգի համակարգի ներդրում՝ ծրագրի, որի լրամշակումից հետո սկսվել են աշխատանքներ ծրագրի ներդրման ուղղությամբ:

3.Սկսվել են աշխատանքներ ազգային պարկերի համար մասնակցային կառավարման պլանների մշակման ուղղությամբ:

4.Կատարվել է պարկերի նյութատեխնիկական բազայի ուժեղացում, անձնակազմի և շահագրգիռ կողմերի համար մշակվել են ուսումնական մասնագիտական ծրագրեր և իրականացվել է ուսուցում:

5.Սևանա լճում սիգ ձկնատեսակի պոպուլյացիայի ներկա վիճակի և հիմնախնդիրների բացահայտման նպատակով շահագրգիռ բոլոր կողմերի

մասնակցությունը կազմակերպվել է կլոր սեղան՝ Սևանա լճում արդյունագործական ձկնային պաշարների վերականգնման և ձկնորսության նոր կարգի ներդրման վերաբերյալ:

6. Պատրաստվել և հաստատվել է Սևանա լճում սիգ ձկնատեսակի պոպուլյացիայի վերականգնման միջոցառումների ծրագիրը /2005թ./, որը նպատակաուղղված է սիգի արդյունագործական որսի իրականացման կատարելագործմանը, ձկան արտահանման նկատմամբ հսկողության ուժեղացմանը, ԳԱԱ հետ համագործակցության բարելավմանը և այլն:

7. ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի կողմից «Սևանա լճի ձկան և խեցգետնի պաշարների հաշվառման ծառայություն» ծրագրի շրջանակներում իրականացվել են ձկնաբանական ուսումնասիրություններ, որոնք հաստատել են սիգի պաշարների կրճատման փաստը: Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվարման, սիգի պոպուլյացիայի և կերային բազայի վիճակի գնահատման վերաբերյալ կազմակերպվել են լայնածավալ քննարկումներ, տրվել են առաջարկություններ 2005թ. ընթացքում կատարվելիք հետազոտությունների ուղղությամբ: Արդյունագործական ձկնատեսակների պահպանման և պաշարների վերականգնման համար 2005թ. երկրորդ կիսամյակում Սևանա լճում արգելվել է սիգ ձկնատեսակի որսը:

8. Սևանա լճի իշխան ձկան և դրա տարատեսակների վերաճի ապահովում պետությունը ֆինանսավորվող ծրագրի շրջանակներում ձկնաբուծական գործարաններում ստեղծվել է իշխանի 2 ենթատեսակների /գեղարքունիի և ամառային իշխանի/ մայրական կազմի որոշակի քանակ: Իրականացվել է Սևանա լճի ձկնային պաշարների համալրում, որի արդյունքում լիճ են բացթողնվել ամառային բախտակի, գեղարքունի և կողակ ձկնատեսակների թրթուր ու մանրածուկ:

9. Մշակվել է Հայաստանում ձկան էնդեմիկ տեսակների պաշարների համալրման ծրագիր 2006-2007թթ համար, որով նախատեսված է Սևանի իշխանի, բեղլուի և Սևանի կողակի ex-situ պայմաններում վերարտադրություն կազմակերպում և բնական պայմաններում պաշարների համալրում:

11. ՀՀ Կառավարության որոշմամբ Սևանա լճի ջրածածկված տարածքների մաքրման խնդիրը ներառված է 2005թ. գերակա խնդիրների շարքում: Պետական պահուստային ֆոնդից միջոցներ են հատկացվել ջրածածկ տարածքներից անտառտնկարկների մաքրման համար:

12. Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2006թ. տարեկան ծրագիրը:

13. Շարունակվում են աշխատանքներ ՀՀ բնության հատուկ պահպանվող նոր տարածքների ստեղծման ուղղությամբ: Մշակվել են Արփի՝ ու Ջերմուկ՝ ազգային պարկերի, Որոտան՝ ու Կիրանց՝ բնական պարկերի, Խոր Վիրապ՝ արգելավայրի ստեղծման ծրագրերը, սկսվել են աշխատանքներ Արնիկ պետական արգելոցի և Արայի լեռ՝ արգելավայրի ստեղծման ծրագրերի մշակման ուղղությամբ:

14. Ընթացքի մեջ են Հայաստանի բնության հուշարձանների գույքագրման, անձնագրավորման, ցանկի պատրաստման և հաստատման աշխատանքներ:

15. Իրականացվել է Շիկահող՝ պետական արգելոցի և Մոսու պուրակ՝ պետական արգելավայրի տարածքների գոտեավորման և սահմանների ճշտման աշխատանքներ, մշակվել է Շիկահող՝ պետական արգելոցի և Մոսու պուրակ՝

պետական արգելավայրի տարածքների սահմանների նկարագիրը հաստատելու, հողերի նպատակային նշանակությունը փոփոխելու և հողամասեր տրամադրելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծը:

16. Ավարտվել է Հարավային Կովկասի երկրներում կենսոլորտային պահպանավայրերի նպատակով առաջնային նշանակության տարածքների ընտրություն, տվյալների հենքի և երկրատեղեկատվական համակարգի ստեղծում ու նախագծային փաստաթղթերի մշակում՝ ծրագրի նախնական փուլը, որի ընթացքում ուսումնասիրվել և վերլուծվել է Սյունիքի մարզում կենսոլորտային տարածք ստեղծելու հնարավորությունը:

Համաձայն գործող օրենսդրության, հանրապետությունում որպես բնության հատուկ պահպանվող տարածքներ երաշխավորված են պետական արգելոցները, պետական արգելավայրերը, ազգային պարկերը և բնության հուշարձանները. Արգելոցներ. Հայաստանում գործում են 3 պետական արգելոցներ, որոնք համապատասխանում են IUCN Ia կարգի պահպանվող տարածքների: Այստեղ մարդկային գործունեությունը սահմանափակվում է միայն գիտական աշխատանքներով:

Արգելավայրեր. արգելավայրերը հանրապետությունում կազմավորվել են 1950-70-ական թվականներին: Կան 23 արգելավայրեր, որոնցից 3-ը կառավարվում են ՀՀ բնապահպանության նախարարության, 19-ը՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության, իսկ 1-ը՝ ֆիզիկայի ինստիտուտի կողմից:

Ազգային պարկեր. հանրապետությունն ունի երկու ազգային պարկ՝ Սևան և Դիլիջան: Սևան ազգային պարկը կազմակերպվել է 1978թ.-ին՝ 150,1 հազ.հա տարածքով, որից 125,2 հազ.հա-ը Սևանա լճի հայելին է, իսկ 24,8 հազ.հա-ը՝ ցամաք: Կառավարվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: Դիլիջան ազգային պարկը կազմակերպվել է 2002թ. Դիլիջանի արգելոցի հիման վրա, տարածքը կազմում է 28,2 հազ. հա:

Բնության հուշարձաններ. Հայաստանի հանրապետությունը հարուստ է բնության կենդանի և անկենդան հուշարձաններով: Ներկայումս Հանրապետությունում իրականացվում է բնության հուշարձանների գույքագրման և անձնագրավորման աշխատանքները:

Հայաստանի ԲՀՊՏ-ների համակարգը ձևավորվել է 1958 թ.-ից: Ներկայումս Հայաստանում գործում են 3 պետական արգելոցներ (Խոսրովի անտառ, Շիկահողի, Էրեբունու), 23 պետական արգելավայրեր, 2 ազգային պարկեր (Դիլիջան և Սևան):

Ներկայումս Հայաստանի ԲՀՊՏ-ներից ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայությանը հանձնված Սևան և Դիլիջան ազգային պարկերը, Խոսրովի անտառ, Էրեբունի և Շիկահող պետարգելոցները, Մոսինների պուրակ, Որդան կարմիր և Մև լիճ արգելավայրերի կառավարման գործառույթներն իրականացվում է Սևան ազգային պարկ, Դիլիջան ազգային պարկ, Խոսրովի անտառ պետարգելոց, Շիկահող պետարգելոց և Արգելոցապարկային համալիր պետական ոչ

առևտրային կազմակերպությունների միջոցով, որոնց կազմում ներառված են in-situ և ex-situ պահպանության հետևյալ օբյեկտները.

ՀՀ Կառավարության 2002թ. օգոստոսի 8 թիվ 1236-Ն որոշմամբ ՀՀ բնապահպանության նախարարության կազմում ստեղծվեց կենսառեսուրսների կառավարման գործակալությունը, որն ի թիվս մի շարք այլ գործառույթների, իրականացնում է նաև վերը նշված in-situ և ex-situ պահպանության օբյեկտների կառավարման աջակցման գործառույթը:

Համաձայն ռազմավարությունում բերված ժամանակացույցի 2004թ ՀՀ կառավարության կողմից սկսվել են լայնածավալ աշխատանքներ ԲՀՊՏ-ների համակարգի կատարելագործման և նոր պահպանվող տարածքների ստեղծման ուղղությամբ: Դրանցից կարևորվում են.

Բնության հատուկ պահպանվող տարածքների կադաստրի ստեղծում:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վերանայման, սահմանների ճշգրտման և քարտեզագրման աշխատանքներ, այդ թվում, Շիկահող և Խոսրովի անտառ պետարգելոցների:

Բնության հուշարձանների գույքագրում, անձնագրավորում և ցանկի հաստատում:

Մրնիկ պետարգելոցի, Որոտան և Կիրանց բնական պարկերի, Ջերմուկ և Արփի (Գնիշիկ) ազգային պարկերի, Արփի լիճ պահպանվող տարածքի, Խոր Վիրապ արգելավայրի ստեղծում:

2005թ. մայիսին ՀՀ ԱԺ կողմից ընդունվել է Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին ՀՀ օրենքը, որով սահմանվում են կեղանիների և բույսերի՝ այդ թվում նաև արժեքավոր և հազվագյուտ տեսակներին պատճառված վնասի հատուցման սակագները: Սույն օրենքով ԲՀՊՏ-ում կեղանիների և բույսերի տեսակներին պատճառված վնասի հատուցման չափը հաշվարկվում է օրենքով սահմանված սակագների հնգապատիկի չափով:

ՀՀ կառավարության կողմից 2006թ. հաստատվել է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գիրքը և Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշումը: Որոշման հավելվածում տրվում է ՀՀ հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող 387 բուսատեսակների և 99 կենդանատեսակների ցուցակ:

Ներկայումս շահագրգիռ գերատեսչություններից ստացված կարծիքների հիման վրա լրամշակվում է Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին ՀՀ օրենքի նախագիծը:

ՀՀ Կառավարության որոշմամբ Սևանա լճի ջրածածկված տարածքների մաքրման խնդիրը ներառված է 2006թ. գերակա խնդիրների շարքում: Պետական պահուստային ֆոնդից միջոցներ են հատկացվել ջրածածկ տարածքներից անտառտնկարկների մաքրման համար:

ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Մևանա լճի էկոհամակարգերի վերականգնման, պահպանության, վերարտադրման և օգտագործման միջոցառումների 2006թ. տարեկան ծրագիրը:

2001թ.-ից Համաշխարհային Բանկի և Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի կողմից սկսվել և առ այսօր շարունակվում է “Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագիրը”, որի գործողությունները նպատակաուղղված են ՀՀ Գեղարքունիքի և Տաուշի մարզերում էկոհամակարգերի ուսումնասիրմանը, կենսաբազմազանության գնահատմանը, բնական պաշարների կայուն կառավարման մեխանիզմների ստեղծմանը և դրանց իրականացման միջոցով չքավորության նվազեցմանը:

Ծրագրի շրջանակներում սկսվել են Մևան՝ և Դիլիջան՝ ազգային պարկերի համար մասնակցային կառավարման պլանների մշակման աշխատանքները:

Ավարտվել է Հարավային Կովկասի երկրներում կենսոլորտային պահպանավայրերի նպատակով առաջնային նշանակության տարածքների ընտրություն, տվյալների հեկթի և երկրատեղեկատվական համակարգի ստեղծում ու նախագծային փաստաթղթերի մշակում՝ ծրագրի նախնական փուլը, որի ընթացքում ուսումնասիրվել և վերլուծվել է Սյունիքի մարզում կենսոլորտային տարածք ստեղծելու հնարավորությունը:

ՀՀ բնապահպանության նախարարի հրամանով 2004թ. հաստատվել է Հայաստանի Հանրապետության բույսերի և կենդանիների Կարմիր Գրքի վարման կարգը և Հայաստանի Հանրապետության բույսերի և կենդանիների Կարմիր Գրքի հանձնաժողովի կազմը: 2007թ նախատեսվում է պետ բյուջեի ՄԺԾ ծրագրի շրջանակներում սկսել Կարմիր գրքի լրամշակման և վերահրատարակման աշխատանքները: